



«ԹՈՂ ՏՈՒՒՔ ՄԱՆԲ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍՏ ԳԱՆ.» ՂՈՒԿ. ԺԸ. 16:

ՀԱՏՈՐ ԺԸ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՅՈՒՆԻՍ 1, 1889

ԹԻՒ 6



ՃՈՆ ՀՈՒՍ ՍՏՈՐԻԳՐԱՍ ԲԱՆՏԻՆ ՄԻՋ

ՃՈՆ ՀՈՒՍ

Ճոն Հուս, Պոհեմիացի բարեկարգիչը և մարտիրոսը, ծնաւ իբր 1369 ին, և ցցի կապուելով այրուեցաւ 1413, Յուլիս 6 ին: Անոր մահը Լուտերի դարձէն ճիշդ հարիւր տարի առաջ էր: Նա ճամբայ պատրաստած էր Լուտերի աշխատութեանց: Ըստած է Հուսի համար թէ «Անտարակոյս արժան է զձոն Հուս համարիլ զլիսաւոր միջոց Բարեկարգութեան, վասն զի նա Ուիլքիֆէ առնելով Լուտերի տուաւ այն ջահը որ բողաւառեց Բարեկարգութիւնը:» Ուիլքիֆ էր Անգլիացի եկեղեցական մը որ մեռաւ 1384 ին, և որուն գրութիւններն ինկան Հուսի ձեռքը և մեծապէս ներգործեցին անոր հաւատքին վրայ:

Հուս դաստիարակուեցաւ ֆրակայի համալսարանին մէջ որ այն ժամանակը Եւրոպայի համալսարանաց ամենէն համբաւաւորներէն մին էր: Աւարտեց իւր ուսումը 1396 ին, և անկէ երկու տարի ետքը կարգուեցաւ դասախօս փիլիսոփայութիւն ուսանողներու: Յամին 1401 պետ կարգուեցաւ փիլիսոփայութեան և աստուածաբանութեան ուսուցչաց վրայ, և քիչ մը ատեն եղաւ սնօրէն համալսարանին: Էր նաև հրօշակաւոր քարոզիչ, և խոստովանահայր Պոհեմիոյ թագուհոյն:

Ամէն բան անոր նպաստաւոր կ'երթար եթէ հոգ չընելով աչք գոցէր Սուրբ Գրոց գէմ գործուած նախատանաց և մոլորութեանց առջև զորս կը տեսնէր եկեղեցւոյ մէջ. բայց Հուս հազանդեցաւ իւր խղճին և թէ՛ քա-

րողեց, թէ՛ գրեց սուտ հրաշքներու և ուրիշ բաներու դէմ որք մարտութիւն կը թուէին անոր: Ասոր վրայ ամբաստանուեցաւ իւր եկեղեցական մեծերէն, բայց ժողովուրդը այնպէս սերտիւ յարած էր անոր, որ հակառակ անոր դէմ արձակուած բանադրանքին նա շարունակեց քարոզել, և եղաւ ֆրակայի ժողովրդեան դիւցազնը մինչև 1442: Սոյն տարին նզովք կարգացուեցաւ բոլոր այն տեղերուն վրայ որ տային անոր ապաստանարան, և Հուս ստիպուեցաւ տեղի տալ Պոհեմիոյ թագաւորին ազաւանաց և մեկնիչ հեռանալ ֆրակայէ:


Յաջորդ տարին համաձայնութիւն մը գոյացաւ կայսեր և Պապին մէջտեղ դու մարել ժողով մը ի Զուիցերի Գոստանցայի մէջ որ հիմա է անկեալ քաղաք մը, և որոյ բնակչաց թիւը 40,000 էն իջած է 7,000 ի: 1444 ին Հուս կանչուեցաւ ներկայանալ ժողովին՝ կայսեր կողմանէ տրուելով անոր ձեռքը ապահովութեան գիր մը. բայց օգուտ չըրաւ այս: Առաջարկուեցաւ անոր հերքել բոլոր իւր վարդապետութիւնները զորս դատապարտած էին եկեղեցական այս գլխաւորները, բայց Հուս մերժեց: «Դրուեցաւ մութ և գարշելի ստպերկրեայ բանտի մը մէջ լծին եզերքը գանուող վանքի մը տակը: Բանտին պատերը շատ խոնու էին և անոր յատակը լծի կը նմանէր: Օրուան մէջ կարճ ժամանակ մը միայն կարող էր կարգալ երբ լուսոյ շառւիղ մը ներս զարնէր բանտին առաստաղին վրայ գտնուած բացուածքէ մը: Ժամանակին մնացած մասը մթան մէջ կը մնար նա:»

Նախորդ երեսի պատկերը օրինակուած է հին նկարէ մը բայց ճիշդ չէ, վասն զի Հուս հաւանականապէս 46 տարուքնէ վեր չէր երբ մեռաւ: Ստեփանոսի նման աղօթք ըրաւ որ ներուէր իւր սպանիչներուն, և փառաբանութիւն կ'երգէր առ Աստուած ցցին վրայ մինչև որ իւր ձայնը կարող չեղաւ հասնել ծուխին պատճառաւ:

Իւր ոսկերաց անձինը (մոխիր) ժողովեցին սպանիչք և ցանեցին Հռենոս գետոյն վրայ, և այն դէպքին բոլոր հետքերը ջնջեցին: Վասն որոյ անծանօթ է անգը ուր մարտիրոսացաւ Հուս, բայց կը կարծուի թէ մօտ էր այն մեծ ժայռին որ կը տեսնուի մեր երկրորդ պատկերին մէջ և որ կը համարուի իբրև անոր յիշատակի արձանը:

ՏՂԱՅՈՑ ԽՕՍՈՒԱՅ ԲԱՐՈՑ ՄԸ  
Ասկէ երբ յետոն տարի առաջ ես աղայ էի. կը յիշեմ որ կիրակի առաւօտ մը եկեղեցւոյ մէջ ժամուցում եղաւ թէ քարոզիչ մը տղոց պիտի քարոզէր կէս օրէն ետքը: Ես առաջ բնաւ չէի լսած որ քարոզիչ մը յատուկ ամբողջ քարոզ մը խօսէր տղոց, ուստի շատ կիսաբացայ ունկնդիր ըլլալ անոր: Այն քարոզիչն էր բարձրահասակ, նիհար և հիւանդուտ երևոյթով մարդ մը, վասն զի թոքախտ ունէր, բայց կը սիրէր աղաքը և կ'ուզէր բարիք ընել անոնց: Երբ քարոզին ժամանակն եկաւ, փոքրիկ եկեղեցին բաւական լեցուած էր և քարոզիչը երգեղէն և աղօթք ընելէն ետ-

կը յիշեմ որ արևը վար կը խոնարհէր արևմտեան հորիզոնէն, և ուր մինչ այն առաջին քարոզիչը կը կանգնէր մեր առջև, դարձաւ և իւր երկայն և վախ մատով ցուցուց մարը մանողարևը և ըսաւ. «Տղաք, տեսէք, ահա արևը մարը կը մտնէ: Այս առաւօտ այն կը գտնուէր հոն՝ արևելեան կողմը, բայց բոլոր ցերեկը կը քայր դէպ արևմուտք, և այս երկայն ստուերները կ'իմացունեն մեզի թէ շուտով մարը պիտի մտնէ այն: Լսեցէք, Աստուած կը խօսի ձեզի, Արևը ձեր բարկութեանը վրայ մարը չմտնէ: Աճապարեցէք, և բոլորովին դուրս վանեցէք ձեր սիրտերէն բարկութիւնը: Ժամանակ մի՛ կորսնցունէք. արևը ձեզի



ՄԵՆ ԺԱՅՈՑ, ՅԵՇԱՅԱԿ ԲՐՁԱՆ ՀՈՒՍԻ

քը ձեռք առաւ բնորանը որ էր, «Արևը ձեր բարկութեանը վրայ մարը չմտնէ:»

Անկից ի վեր շատ ժամանակ անցած է: Չեմ յիշեր քարոզչին անունը, ոչ կը յիշեմ թէ ուրիշ՝ եկած էր նա, և ոչ ալ՝ թէ ինչ եղաւ յետոյ. բայց սա դիտեմ որ բնաւ չեմ մոռցած բնաբանը և այն տպաւորութիւնը որ մնաց իմ մանկական սրտիս վրայ: Քարոզիչը ցուցուց մեզի թէ ի՛նչ կը նշանակէր բնաբանը: Ըսաւ մեզի թէ տղոց բնական է ժամանակ ժամանակ բարկանալ իրարու դէմ. բայց զրգը ուի պատճառը որչափ մեծ ըլլայ իսկ, մենք բնաւ պահելու չենք բարկութիւն մեր սիրտերուն մէջ, պարտիմք հաշտուիլ դեռ գիշերը վրայ չհասած: Աստուծոյ առջև ահաւոր մեղք է քնանալ՝ բարկութիւնը մեր սիրտերուն մէջ կրելով:

չսպասեր: Հրամանը վճռական է: Մէկդի՛ թողէք ձեր բարկութիւնը, եթէ ոչ՝ Աստուծոյ բարկութիւնը պիտի գրգռէք ձեզի դէմ անոր անհնազանդ գտնուելով:»

Այնպէս ազդուեցայ այն քարոզչին որ պատրաստ էի ներելու աշխարհի մէջ իմ ամենէն մեծ թշնամոյս, և անոր ազդեցութիւնը բնաւ ջնջուած չէ մտքէս:

ՕԳՆԵԼՈՒՆ ՀԱՃՈՑԻԸ

Ի՛նչ է այն: Երբ օգնութիւն մը կ'ընենք կամ մարդասիրութիւն մը կը ցուցնենք անձի մը, ի՛նչ է այն որ ջերմ զգացում մը կը յարուցանէ մեր սիրտերուն մէջ և զուարթ ժպիտ յառաջ կը բերէ մեր շրթանց վրայ, և թէ՛ թեւութիւն մը կ'ընծայէ մեր ստիպ, այնպէս որ չենք կրնար չցատկոտել երբ

կը քաղենք: Այն է պատճառը որ մենք պէտք չունինք մեր տուածին, թէ մեզի դիրքին էր կատարել այն մարդասիրական գործը: Այլ, ամենևին: Երբ կու տանք բան մը որ մեզի սիրելի չէ, մեծ երջանկութիւն չենք զգար: Երբ կ'ընենք մարդասիրական գործ մը քիչ աշխատութեամբ, մեր սիրտերը չեն բարախեր ցնծութեամբ: Միայն այն ժամանակ երջանկութիւն կը զգանք երբ մեր նախած բանը դիրքու չենք ստացած, և որչափ դժուարութեամբ որ ի գործ դնենք մեր ընելիք օգնութիւնը՝ այնչափ աւելի ուրախութիւն կը զգանք այն գործը կատարելէ ետքը:

Օր մը աղու որ հագուած փոքրիկ տղայ մը կը պարտէր ֆարիզի փողոցներուն մէջ, և երբ կը ջանար անցնիլ բազմամարդ փողոցէ մը, գետիւնը տապալեցաւ անցնող կառքի մը ձողէն զարնուելով: Մէկ վայրկեանի մէջ բազմութիւն մը ժողովուեցաւ անոր շուրջը, բայց անոնց մէջ տղին քով առաջին համողն էր փողոցի փոքրիկ աւելածու (ալոյ) մը քորձեր հագած և աղտոտ: Սա տեսած էր վտանգը և ցատկած հասած էր օգնել տղին երբ հազիւ անոր զարնուեցաւ կառքին ձողը: Յիշեալ տղան փափկութեամբ և ինամալ վեր վերցուց իր բազկաց մէջ այն հարուստի տղան, և բազմութեան մէջէն տարաւ զնա մերձակայ դեղարան մը: Հասկցուեցաւ որ տղան վրնասուած չէր այնչափ որչափ կը կարծուէր, և բազմութիւնը շուտով ցրուեցաւ: Դեղագործը կապեց տղին քնասուած տեղերը: Հոն կը կայնէր կարեկից նայուածքով փոքրիկ աւելածու տղան, որ երբ գործը լմնցաւ, վազեց դեղարանէն դուրս, կանչեց հանրակառք մը և մեծ զգուշութեամբ օգնեց քնասուած տղին մտնել կառքը, վճարեց կառքին վարձը, և ըստ կառավարին թէ ուր պէտք էր կեցուենլ կառքը, երբ հանրակառքը անցաւ հեռացաւ և տեղածուն ետ դարձաւ երթալ իւր գործին, մարդ մը որ դիտած էր զնա, խօսեցաւ տնոր հետ, մատոյց անոր ֆրանք մը:

«Տղաս», ըսաւ, «դուն չես կրնար տալ այդ հարուստ տղին կառքին վարձը: Ես տամ քեզի ինչ որ վճարեցիր:»

Աւելածու տղան ձեռուրները ետեր տարաւ, և «Ո՛չ, ոչ», ըստաւ, «վճան զի այլ ևս հաճոյք չմար ինձ:»

Տղան այս խօսքով ըսել ուզեց թէ մարդասիրութիւն ըրած լինելու հաճոյքը բոլորովին պիտի կորսնցունէր եթէ զոհոցութիւն մը ըրած չըլլար. և շատ յիտակ էր ըսածը: Այն փոքրիկ աւելածուն հասկցած էր թէ ինչ էր օգնելուն կամ բարիք ընելուն մէջ պարունակուած երջանկութեան դաղտիքը:

Պրիւժ

Այս պատկերը կը ներկայացունէ մեզի Պեճիոյ հին քաղաքի մը մէկ մասը: Գիւրքի մը մէջ կը կարգանք թէ Պրիւժ ասկէ քսան տարի առաջ ունէր աւելի քան 47,000 բնակիչ, որոց 15,000ն էին մուրացիաններ: Հասկը նալու համար զայս, պարտիւք յիշել պարագայ մը Պրիւժի պատմութենէն: Անոր պատմութիւնը կը սկսի Գրիստունէական թուականին իբր երրորդ դարէն. և Մեծին կարորսի ժամանակ, ասկէ 1,100 տարի առաջ, այս քաղաքին ոստայնանկը բարձր համբաւ ունէին: Այդ ատենէն սկսեալ Պրիւժի հարբստութիւնը շարունակեց աճել մինչև որ եղաւ աշխարհիս կարևորագոյն աւելարական կեդրոններէն մին, և զըլ-

թիւը և շքեղութիւնը, ամէնքն այ կը հաստատեն անոր նախկին մեծութիւնը, մինչ անոր ընդհանուր ամայի երևոյթը վկայ է անոր այժմու աննշան վիճակին:»

Բայց Պրիւժի առևտուրը հիմա յառաջ երթալու վրայ է: Բանի մը ջրանցներ շինուած են հոն նաև ընտիր քարափներ: Զանգակատան աշտարակը որ կ'երևի պատկերին մէջ, էրոպայի այն տեսակ շէնքերուն աւանէն գեղեցիկն է. զանգակներն ունին շատ քաղցր ձայն, և կը հնչեն ժամն անգամ մը: Աշտարակը որ չինուած է ԺԳ. դարուն մէջ, ունի 290 սաք բարձրութիւն:



Պրիւժ

ԻՐԱՆՈՒՆԻՔ ԶՆՈՒՔ ԲԵՐՆԸ

Խառնոր տեղը ուր կ'այցելէին Անգղիացի, ձենովացի, և վենետիկցի վաճառականք: Գաղղիացի թագուհին որ այցելեց յիշեալ քաղաքը ԺԳ. դարուն սկիզբը, գոչեց, «Հոս հարիւրաւորներ կան որ թագուհւոյ կերպարանք ունին աւելի քան որչափ ես:» Բայց երբ քաղաքն ինկաւ Հապսպուրկեան արքայական գերդաստանին ձեռքը, քաղաքացիք բանտարկեցին Մաքսիմիլիանոս արքիդուքսը վասն զի կրճատած էր անոնց առանձնաշնորհութիւնները, և նա յետոյ վրէժ լուծեց քաղաքին վաճառականութիւնը փոխադրելով Անվերս: Աւելի յետոյ եկան վեշաասաներորդ դարու կրօնային հալածանքները որ լրացուցին քաղաքին կործանումը: Մատենագիր մը կ'ըսէ. «Քաղաքին մեծ չըրպատար, անոր բազմութիւ հրապարակները և փողոցները, և անոր հասարակաց շէնքերուն

Առաւօտ մը շատ փոքր տղայ մը երևցաւ քաղաքի մը ոստիկանութեան պաշտօնատան մէջ: Իւր մէկ ձեռքն ունէր պատուատուն գլխարկ մը, և միւս ձեռքը՝ կանաչ տոպրակ մը: Անոր ետևէն եկաւ կանգնեցաւ ոստիկանութեան կոշտ պաշտօնեայ մը ծիծաղկոտ դէմքով: Երբ տղան տեսաւ որ կը գտնուէր պաշտօնատան սրահին մէջ, վարանելով նայեցաւ չորս կողմը իբր թէ ետ դառնալ ուզելով, բայց երբ կէս մը դարձաւ և տեսաւ վերը յիշուած մարդուն ծիծաղիլը, ամուր մը իրար բերելով իւր շրթունքները յառաջ քալեց դէպի գլխարկանը:


«Տէր իմ», «դո՛ւք էք դատաւորը», ըսաւ քիչ մը դողդոջուն ձայնով: «Ես եմ, տղաս, ի՛նչ կրնամ ընել քեզի համար», հարցուց դատաւորը վարնալեղով, զարմացած՝ իւր առջև գտնուող

փոքրիկին վրայ: «Տէր իմ, ես եմ ճոնի Մուր. եօթը տարեկան եմ, և կը բնակիմ հարիւր քսանուերեքերորդ փողոցը լայն պողոտային մօտ. և այս է գնտակներ խաղալու համար ամենէն աղէկ մի միայն տեղը մեր տան մօտ պարտէզի մը քովը, ուր գետինը հարթ է. բայց սնկիսը մնափաճառ մը կայ» — հոս տղին ձայնը փոխուեցաւ և այս տերը կարմրեցան, — «այդ մնափաճառը տեղին վրայ մենէ աւելի իրաւունք չունի. իւր կառքը հոն կը թողու. և այս առտու երբ այն տեղ գնտակներ կը խաղայինք, վնասոց մեզ, և իմ վեց գնտակներս առաւ և ցանկին վրայէն անդին՝ պարտէզը նետեց. գացի ուստիկանաց կայարանը, և անոնք խընդացին վրաս, և ըսին որ հոս դամ և խօսիմ ձեզի անոր վրայով:»

Ոստիկանութեան յիշեալ խոշոր պաշտօնեան և հոն ներկայ գտնուողները սկսան ծիծաղիլ բարձրաձայն. տղան այնպէս սաստիկ կը դողար բարկութենէն և երկիւղէն որ իւր փոքրիկ կանաչ տոպրակին մէջ գտնուած գնտակները իրարու զարնուելով ձայն կը հանէին: Բայց գատաւորը իւր ձեռքով սաստիկ զարկաւ գրասեղանին, և շուտով խորին լուսթիւն եղաւ:

«Կատարեալ իրաւունք ունիս, տըրգաս» ըսաւ նա ծանրութեամբ, «գալ հոս և խօսիլ ինձ անոր վրայով: Դուն նոյնչափ իրաւունք ունիս ինչ էն՝ սոսկի մը զայն որչափ ինչ որչափ հարուստ մարդ էր սոսկիներուն զայն: Եթէ իւրաքանչիւր քաղաքացի նոյնչափ հոգ տանէր իրաւանց որչափ դուն, ոճիրները շատ մը պակաս պիտի ըլլային: «Եւ դուն, պարոն», յաւելցոյց գառնալով խոշոր ոստիկանին որ հիմա լուրջ կերպարան մը առած էր, «գնա այս փոքրիկ մարդուն հետ այդ մնափաճառին և վճարել տուր այն գընտակներուն գինը. և եթէ չվճարէ՛ ձերբակալէ զնա և բեր հոս:»

Այս փոքրիկ տղան գիտէր որ տարբերութիւն կար իրաւունքին և անիրաւութեան մէջտեղ: Նա ոչ վիճեցաւ, ոչ կռուեցաւ և ոչ հայհոյեց, այլ խնդրեց իւր իրաւունքը: Այս գատաւորն ալ գիտէր թէ ինչ է իրաւունքը, և սորվեցուց լաւ դաս մը այն կոչու մարդուն որ անիրաւութիւն ըրած էր տղին, և ոստիկանութեան պաշտօնէին՝ որ ծիծաղած էր անոր վրայ:



ՓՈՔՐԻԿ ՏՂԱՅ ՄԸ ԻՆՉՊԻՍ ՍՍԱՅԱԻ ՆՈՐ ՇԱՊԻԿ ՄԸ  
(Վեդ Գերմանովն)

Ճամանակաւ կար աղքատ այրի մը որ ունէր եօթն որբեր զորոնք ինք կէ-

րակրելու էր: Ուստի խեղճ մայրը ըստիպուած էր ամէն օր երթալ տնէն դուրս՝ գործ գործելու համար, և միայն ձմեռ գիշերները կարող էր մանել և շապիկցու գործել իւր զաւակաց համար որպէս զի մերկ չմնային: Խորաքանչիւր տղայ մէկ շապիկ միայն ունէր. և երբ տղաց ամենէն մեծին շապիկը պզտիկնար, կը տրուէր այն տղէն անմիջապէս փոքր տղին: Եւ այնպէս կը պատահէր որ տղաց ամենէն փոքրին հասնող շապիկը միշտ այնքան մաշած և բարակցած կ'ըլլար որ արևուն լոյսը կ'անցնէր անոր մէջէն:

Ամենէն փոքր տղան էր զուարթ տղեկ մը, չորս տարեկան, որ զարմանալի սէր ունէր կենդանեաց և ծաղկանց վրայ: Ուր որ տեսնէր զառնուկ մը, կը վազէր գտնել թարմ տերևներ՝ կերակրելու համար զայն: Երբ գտնէր բոյնին մէջէն վար ինկող թռչնոյ ձագ մը, կը տանէր զայն տուն, և կը կերակրէր մինչև որ մեծնար նա, այնուհետև կ'արձակէր և կը թռչցունէր զայն: Շատ կը սիրէր նաև սարդերը (բոլ-ճէտ). երբ տան մէջ գըտնէր անոնցմէ հատ մը, դռնէն դուրս կը հանէր զայն և կ'ըսէր, «Այս փոքրիկ կենդանին ալ պէտք է որ ապրի»: Բայց անգամ մը այնչափ հինցաւ և մաշեցաւ անոր շապիկը՝ որ ինկաւ մարմնէն. և որովհետև ամառ էր, և մայրը պէտք էր որ երթար իւր օրական գործին, նա չէր կրնար ուրիշ շապիկ մը շինել անոր: Ուստի տղեկը կը վազվազէր ասդին անդին ճիշդ ինչպէս որ սիրելի Աստուածը ստեղծած էր զնա:

Օր մը մինչ այս փոքրիկ տղան մորմ կը ժողվէր անտառին մէջ, պատահեցաւ գառնուկի մը որ անուշիկ մը անոր վրայ նայելով ըսաւ, «Ո՛ր է քու փոքրիկ շապիկը:» Փոքրիկ տղան պատասխանեց տրամու թեամբ, «Շապիկ չունիմ. և մայրս չկրնար շինել համար մինչև ձմեռ: Բայց ոչ, նոր շապիկը պիտի շինուի իմ ամենէն մեծ քրոջս համար, և իմ հին մը պիտի ըլլայ: Ո՛հ, ե՛րբ արդեօք պիտի ունենամ նոր շապիկ մը:» Այն ատեն ըսաւ գառնուկը. «Շատ կը ցաւ իմ վրադ, ես իմ բուրդս պիտի տամ քեզի, և դուն կրնաս անկէ շինել տալ նոր շապիկ մը:» Այսպէս գառնուկը փետտեց իւր բոլոր բուրդը և տուաւ զայն փոքրիկ տղին:

Տղան մինչ բուրդը ձեռքն առած կ'անցնէր մացառի մը քովէն, մացառը կանչեց և ըսաւ, «Ի՛նչ է այդ տա-

րածդ:» «Բուրդ», պատասխանեց փոքրիկ տղան, «ինձի շապիկ շինուելու համար:» «Ինձի՛ տուր զայն», ըսաւ մացառը, «ես պիտի գզեմ զայն քեզի համար:» Տղան բուրդը տուաւ մացառին, որ անցուց իւր փշոտ ոտերուն մէջէն կրկին և կրկին, և գզեց բուրդը շատ լաւ կերպով: «Տար զայդ զգուշութեամբ», աղաղակեց մացառը, «ըլլայ որ ազտտես զայն:»

Այսպէս տղան զգուշութեամբ տաւ իւր գզած բուրդը մինչև որ տեսաւ սարդի ոտայն մը (մամուկի բոյն), և սարդը կընստէր անոր կեղոնը որ կանչեց տղին, և ըսաւ, «Փոքրիկ տըրգայ, ինձ տուր այդ բուրդը. ես պիտի մանեմ և ստայնանկեմ (կտաւ գործել) զայն, ես գիտեմ թէ ինչ պիտի ընէիր զայդ:» Այն ատեն սարդը սկսաւ գործել արագ արագ իւր նուրբ ոտուքներով, և մանեց և ստայնանկեց այնպիսի ազնիւ ասուի (չուխա) որուն նմանք բնաւ չէր տեսնուած, և տուաւ զայն փոքրիկին: Տղեկը ուրախութենէն ցատկըտելով վազվազելով եկաւ հասաւ գետակին մը քով: Հոն կընստէր խոշոր խեցգետին (եանլճ) մը որ աղաղակեց, «Ո՛ր կ'երթաս այդպէս սարդ. ի՛նչ կը տանիս հետդ:» «Ասուի», ըսաւ փոքրիկ տղան, «նոր շապիկ մը շինուելու համար:» «Ուրեմն բուն տեղը եկար», ըսաւ խեցգետինը, «ինձ տուր այդ ասուին:» Այնուհետև առաւ զայն և իւր խոշոր մկրատներով կտրեց անկէ փոքրիկ շապիկ մը շատ գեղեցիկ: «Ո՛հա, տղեկ», ըսաւ, «միայն անոր կարուիլը մնաց:»

Տղան առաւ զայն, և տխրութեամբ կ'երթար, վասն զի այն ատեն անգամ պիտի չկրնար ձեռք բերել իւր նոր շապիկը մինչև ձմեռ երբ իւր մայրը ժամանակ պիտի ունենար կարելու զայն: Բայց շուտ ետքը տեսաւ փոքրիկ թռչուն մը որ կընստէր մացառի մը վրայ, և թռչունը ճուռուղեց բակով, «Կեցիր, տղեկ, ես շինեմ քու շապիկը:» Այսպէս բարէն ետքը թռչունն առաւ երկայն գերձան մը, և թռաւ ետ և առաջ, գործելով իւր փոքրիկ կտուցով, մինչև որ շապիկին կտորները իրար կարուեցան: «Հիմա», ըսաւ թռչունը, «դուն ունիս անմասն ընտիր շապիկ մը:»

Եւ փոքրիկ տղան հագնելով շապիկը ուրախութեամբ վազեց տուն, ցուցրնելու համար զայն իւր քոյրերուն և եղբայրներուն, որոնք ամէնքն ալ ըսին թէ իրենք երբեք չէին տեսած անկէ աւելի աղւոր շապիկ մը:

Ամերիկայի Մեխիկոյոյ քնկերութեան կողմէն,  
Արտօմստեր ձ. Գ. ԿԻՆ  
Տարօք—Խմբագիր Զ. Ս. ՊԱՐՆԸՄ  
Ճիշմանեցաւ Եղիշույ, Ամերիկայի իսկ  
ԿՈՍՏԵՆԻՆՈՒԳՈՒԽՍ  
Ի ՏՊԱՐԱՆ Գ. ՍՊՈՒՆ ԳՈՍԱՅԱՆ